



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 178-Ա

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Կապան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի չորրորդ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 143-Ա որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի 2022թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող, ք. Կապան, Չորք թաղամաս, թիվ 20 հասցեում գտնվող շենքից «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող, ք.Կապան, Չարենցի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող

«Մշակույթի պալատի» շենքից անհատույց օգտագործման իրավունքով «Մոսկովյան մշակութային կենտրոն «Դոմ Մոսկվի» Երևանում» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տարածք տրամադրելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող, ք.Կապան, Ռ. Մելիքյան փողոցի թիվ 8 հասցեում գտնվող շենքից անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Կապանի թանգարանային միավորում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տարածք տրամադրելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 146-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սևաքար գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Նորաշենիկ գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ձորաստան բնակավայրի համակցված փաստաթղթերում փոփոխություն կատարելու և 0.25424 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

14. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և 0,02654 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

15. Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու և 5.018 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

16. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի «Խութին արտ» այգեգործական ընկերության թաղամաս թիվ 25 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

17. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող հողերի կառավարման 2023 թվականի ծրագիրը հաստատելու մասին

18. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրից ծագած պարտավորությունները ներելու մասին

19. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N 143-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

20. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 09-ի թիվ 94-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

21. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին

22. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը որոշելու մասին

Կողմ (22)

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
ԳՈՌԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ
ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՆԺԵԼԱ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱԼԵԿՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

[Handwritten signatures on lines]

Դեմ (0)
Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՆԻՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 179-Ա
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023
ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով և 82.1-րդ հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի՝ էլեկտրոնային գործիք և ամփոփաթեթը:

Կողմ(22)՝

- ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
- ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
- ԳՈՌԹ ԱԴԴԵՎՈՍՅԱՆ
- ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ
- ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
- ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
- ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
- ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
- ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
- ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
- ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ



2022թ. դեկտեմբերի 27
ք. Կապան



ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ-ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Հ/Հ	Պարտադիր խնդիր	Գումարը	Ծանոթություն
3. Համայնքի գոյքի կառավարում		2 009 931 699	
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	581 027 100	
2	Կապանի համայնքապետարանի մասնաշենքի ուժեղացում, վերակառուցում և նոր մասնաշենքի կառուցում	1 025 712 200	
3	Տավրուս գյուղի նոր վարչական շենքի կառուցում	48 888 290	
4	Նորաշենիկ գյուղի վարչական շենքի նորոգում	24 086 450	
5	Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի շենքի մասնակի նորոգում և ջեռուցման համակարգի վերականգնում	36 457 013	
6	Ըրկենանց գյուղում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում	41 050 000	
7	Ներքին խոտանան գյուղում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում	43 153 792	
8	Վանեք գյուղում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում	48 510 000	
9	Եղեգ գյուղում վարչական շենքի կառուցում և տարածքի բարեկարգում	46 371 480	
10	Եղվարդ գյուղի կենցաղի տան վերանորոգում	48 033 560	
11	Ծավ գյուղի կենցաղի տան վերանորոգում	37 969 610	
12	Վերին խոտանան գյուղի հանդիսությունների սրահի նորոգում	28 672 204	
4. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն		2 516 509 274	
13	Կրթություն /Նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների պահպանում/	960 900 900	
14	«Կապանի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում և տարածքի բարեկարգում	392 593 200	
15	«Կապանի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում և տարածքի բարեկարգում	479 084 390	

16	«Կապանի թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի վերակառուցում և տարածքի բարեկարգում	297 540 964	
17	«Կապանի թիվ 10 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի վերանորոգում և տարածքի բարեկարգում	293 846 000	
18	Լեռնագործների փողոցում շենքի վերակառուցում՝ 150 երեխայի համար ՆՈՒՀ հիմնելու նպատակով	50 000 000	
19	Արծվանիկ գյուղի ՆՈՒՀ-ի հարևանությամբ տարածքի բարեկարգում	39 543 820	
20	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար գույքի ձեռքբերում	3 000 000	
5. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում		766 981 875	
21	Հանգիստ, մշակույթ և կրոն /Կապանի մշակույթի կենտրոն, Կապանի ակումբագրադարանային միավորում, Կապանի արվեստի թանգարան, Վազգեն Սարգսյանի անվան մանկական գրոսայգի ՀՈԱԿ-ների պահպանման ծախս, մարզամշակութային, երիտասարդական միջոցառումներ, փառատոներ և այլն/	296 130 200	
22	Մշակույթի կենտրոնի շենքի ամբողջական նորոգում	200 000 000	
23	Մշակույթի կենտրոնի նյութատեխնիկական բազայի արդիականացում, վերազինում և կահավորում	30 000 000	
24	Կապան քաղաքի Շինարարների 8 հասցեում ակումբ-գրադարանի նորոգում	76 665 825	
25	Կապան քաղաքի Բաղարերդ 6 հասցեում ակումբ-գրադարանի նորոգում	47 840 100	
26	Կապան քաղաքի Բաղարերդ 14 հասցեում գրադարանի նորոգում	26 502 910	
27	Կապան քաղաքի Դավիթ Բեկ 8 հասցեում ակումբ-գրադարանի նորոգում	89 842 840	
6. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն/17. Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը		35 015 000	
28	Սոցիալական պաշտպանություն /Կապանի մանկական կենտրոն ՀՈԱԿ-ի պահպանում և խոցելի ընտանիքներին հասցեական և թիրախավորված աջակցության տրամադրում/	35 015 000	
7. Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խթանում		15 000 000	
29	Աթլետիկական փակ մարզասրահի կառուցում	15 000 000	

<p>9. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, քարեկարգում և կանաչապատում, համայնքի աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում</p>	<p>1 063 533 409</p>		
<p>30</p>	<p>«Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի համար գրասենյակի կառուցում</p>	<p>65 348 080</p>	
<p>31</p>	<p>Կապան քաղաքի Շինարարների փողոցի թիվ 15 և թիվ 17 բ/բ շենքերի հարևանությամբ խաղահրապարակի և մարզադաշտի վերանորոգում և հանգստյան գոտու կազմակերպում</p>	<p>81 680 000</p>	
<p>32</p>	<p>Կապան քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 7 և 6 բ/բ շենքերի միջանկյալ հատվածում խաղահրապարակի և մարզադաշտի վերանորոգում և հանգստյան գոտու կազմակերպում</p>	<p>28 158 257</p>	
<p>33</p>	<p>Կապան քաղաքի Հ. Ավետիսյան փողոցի թիվ 1 բ/բ շենքի հարևանությամբ խաղահրապարակի և մարզադաշտի վերանորոգում և հանգստյան գոտու կազմակերպում</p>	<p>36 331 201</p>	
<p>34</p>	<p>Կապան քաղաքի Հալիձոր թաղամասի թիվ 6, թիվ 8 և թիվ 15 բ/բ շենքերի հարևանությամբ խաղահրապարակի և մարզադաշտի վերանորոգում և հանգստյան գոտու կազմակերպում</p>	<p>63 365 600</p>	
<p>35</p>	<p>N 5 կանգառի հարևանությամբ հանգստի գոտու կազմակերպում</p>	<p>88 762 583</p>	
<p>36</p>	<p>Նորաշենիկ գյուղում մարզադաշտի կառուցում</p>	<p>16 181 176</p>	
<p>37</p>	<p>Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների նորոգում</p>	<p>96 836 513</p>	
<p>38</p>	<p>Բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգում</p>	<p>5 000 000</p>	
<p>39</p>	<p>Կապան քաղաքի թունելից մինչև Բաղարերդ թաղամասի վերջնամասը փողոցային լուսավորության համակարգի կառուցում</p>	<p>152 541 200</p>	
<p>40</p>	<p>Ծաղկապատ տարածքների, կանաչ գոտիների ընդլայնմանն ուղղված աշխատանքների իրականացում</p>	<p>5 000 000</p>	
<p>41</p>	<p>Դավիթ Բեկ բնակավայրի ջրամատակարարում</p>	<p>112 188 000</p>	
<p>42</p>	<p>Կաղնուտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ապահովում</p>	<p>101 064 871</p>	
<p>43</p>	<p>Սրաշեն բնակավայրի խմելու ջրամատակարարման ապահովում</p>	<p>78 718 818</p>	
<p>44</p>	<p>Ուժանիս բնակավայրի խմելու ջրի կառուցում</p>	<p>132 357 110</p>	
<p>10. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում</p>	<p>1 556 799 976</p>		

45	Կապան քաղաքի Գ. Նժդեհ փողոցի, 1-ին և 2-րդ նրբանցքների հիմնանորոգում	134 312 000	
46	Կապան քաղաքի Գր. Արզումանյան փողոցի հիմնանորոգում	18 838 996	
47	Կապան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հիմնանորոգում	70 805 846	
48	Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի թիվ 7, 9, 11, 13, 15 շենքերի բակերի հիմնանորոգում	99 280 800	
49	Կապան քաղաքի Հալիձոր թաղամասի բակային տարածքների հիմնանորոգում	88 338 568	
50	Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 11, 12, 13 շենքերի բակերի հիմնանորոգում	27 767 528	
51	Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 15, 16, 17, 18, 19, 20 շենքերի բակերի հիմնանորոգում	112 351 600	
52	Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 25Ա, 25Բ շենքերի բակերի հիմնանորոգում	43 704 096	
53	Կապան քաղաքի Սպանդարյան փողոցի 4-րդ նրբանցքի հիմնանորոգում	34 164 552	
54	Կապան քաղաքի Գր. Արզումանյան փողոցի 3-րդ նրբանցքի հիմնանորոգում	56 324 236	
55	Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի 3-րդ նրբանցքի հիմնանորոգում	104 508 000	
56	Կապան քաղաքի Լեոնազործների 3-րդ նրբանցքի հիմնանորոգում	44 552 400	
57	Կապան քաղաքի Մ. Հարությունյան փողոցի թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 8 շենքերի բակերի և Շահումյան փողոցի թիվ 37, 38 շենքերի բակերի հիմնանորոգում	193 508 000	
58	Կապան քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 6, 7 շենքերի բակերի հիմնանորոգում	32 260 800	
59	Կապան քաղաքի Ավետիսյան փողոցի N 2, 4, 6, 28, 30, 32, 34 և Պապյան փողոցի N 5, 6, 7, 8, 9, 15, 16, 17, 18, 19, 20, 22, 24 և 26 շենքերի բակերի ասֆալտապատում	207 866 144	
60	Կապան քաղաքի Ռ. Մելիքյան փողոցի՝ Արվեստի պետական քոլեջի հետնամասի, թիվ 6 ք/ք շենքի բակի հիմնանորոգում	19 961 600	
61	Արամ Մանուկյան փողոցի թիվ 1 ք/ք շենքի և Չարենցի փողոցի թիվ 2, 4 ք/ք շենքերի բակերի հիմնանորոգում	29 889 700	
62	Գ. Նժդեհ փողոցի աջակողմյան մայթի նորոգում	35 671 120	
63	Մյունիք բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	103 555 970	
64	Արծվանիկ բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	99 138 020	
11. Աջակցություն պետական պաշտպանության իրականացմանը		1 457 166 154	
65	Կապան քաղաքում ապաստարանների կառուցում	1 457 166 154	

12. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացումը		8 000 000	
66	Գետերի և սելավատարների մաքրման աշխատանքների իրականացում	5 000 000	
67	Սեյսմակայունության գնահատման և բարձրացման նպատակով շենքերում անհրաժեշտ հետազոտությունների կատարում	3 000 000	
14. Շրջակա միջավայրի պահպանություն		742 251 080	
68	Շրջակա միջավայրի պահպանություն՝ «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի պահպանում, աղբահանության, սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպում, աղբարկղների և օրգանական աղբի կուտակումների մշակումների իրականացում /սխտահանում/, «Կապանի ՊԼԱՍՏՇԻՆ» ՀՈԱԿ-ի պահպանում և այլն	607 672 000	
69	Վաչագան գետի հունի մաքրում, հայելային պատկերների ու հենապատերի վերականգնում, նոր ճաղավանդակների տեղադրում /Բժշկական կենտրոնին հարակից կամրջից մինչև մարզպետարանի կամուրջ/	134 579 080	
16. Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում		621 516 503	
70	Թունո կենտրոնի ստեղծում	621 516 503	
18. Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծում			
71	Գյուղերի հասարակական շենքերում տեղակայված բուժկետները նորոգվում են այդ շենքերի նորոգման ընթացքում		
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		10 792 704 970	

Աշխատակազմի քարտուղար՝  Ն. Շահնազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 180-Ն

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. 2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի /այսուհետ՝ նաև Համայնք/ վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. 2023 թվականի համար Համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝

1) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար վճարները՝ համաձայն Հավելված 2-ի,

2) Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար Համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարները՝ *համաձայն Հավելված 3-ի:*

3) Համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից քնակչությանը մատուցվող ծառայությունների դիմաց վճարները՝ համաձայն Հավելված 4-ի:

3. Սահմանել, որ տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ(22)

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
ԳՈՒ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՆԺԵԼԱ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԻՎԱՆՅԱՆ
ԱՐՏՅՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱԼԵԿՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՅ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

[Handwritten signatures]

Դեմ (0)
Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՄՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 27
ք. Կապան





**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍՏԱԿՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1) Կապան համայնքի Կապան քաղաքում հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **30000 դրամ,**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **60000 դրամ:**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **100000 դրամ:**

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **100000 դրամ:**

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **200000 դրամ:**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **9000 դրամ:**

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ:**

2) Կապան համայնքում ընդգրկված գյուղական բնակավայրերի համար հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա., մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ,**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **30000 դրամ:**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 դրամ:**

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 դրամ:**

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **100000 դրամ:**

- գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝

3000 դրամ:

5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն **9000 դրամ,**

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի 1-ին կետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն Հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն Հավելվածի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝

5000 դրամ.

4. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200000 դրամ.**

4.1. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

200000 դրամ.

4.2. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

200000 դրամ.

5. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում

հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

150000 դրամ

5.1. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

150000 դրամ

5.2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

150000 դրամ

6. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտովազման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

45000 դրամ

7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտովազման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

20000 դրամ

8. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

75000 դրամ

9. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

1) Կապան համայնքի Կապան քաղաքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10000 դրամ**։

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12000 դրամ**։

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **18000 դրամ**։

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **25000 դրամ**։

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **40000 դրամ**։

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **100000 դրամ**։

2) Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բելս, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **5000 դրամ:**

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **6000 դրամ:**

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **9000 դրամ:**

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **12500 դրամ:**

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **20000 դրամ:**

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **50000 դրամ:**

3) գյուղական բնակավայրերում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **3000 դրամ:**

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **3600 դրամ:**

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **5400 դրամ:**

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **7500 դրամ:**

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **12000 դրամ:**

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **30000 դրամ:**

4) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան Կապան համայնքի Կապան քաղաքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **8000 դրամ:**

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **11000 դրամ:**

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **14000 դրամ:**

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **21000 դրամ:**

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **26000 դրամ:**

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **46000 դրամ:**

5) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բելս, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային

արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **4000 դրամ:**

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5500 դրամ:**

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7000 դրամ:**

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10500 դրամ:**

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13000 դրամ:**

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **23000 դրամ:**

6) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան գյուղական քնակավայրերում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **2400 դրամ:**

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3300 դրամ:**

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **4200 դրամ:**

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6300 դրամ:**

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7800 դրամ:**

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13800 դրամ:**

10. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ **350 դրամ**

11. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ **37500 դրամ,**
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **150000 դրամ,**
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ **300000 դրամ,**
- 4) խաղատների համար՝ **750000 դրամ,**
- 5) շահումով խաղերի համար՝ **750000 դրամ,**
- 6) վիճակախաղերի համար՝ **225000 դրամ.**

12. Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման Համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան տնտեսավարողի գործունեության համար առանձնացված

յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5000 դրամ:**

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8000 դրամ:**

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **14000 դրամ:**

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **20000 դրամ:**

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **45000 դրամ:**

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **75000 դրամ:**

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000 դրամ:**

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 դրամ:**

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000 դրամ:**

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000 դրամ:**

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000 դրամ:**

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **16000 դրամ:**

13. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2000 դրամ,**

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500 դրամ,**

3) սոցիալական գովազդի համար՝ **0 դրամ,**

4) այլ արտաքին գովազդի համար՝ **1500 դրամ,**

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով – **375 դրամ,**

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր ազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով – **150 դրամ:**

14. Համայնքի կամ Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշերը (զինանշանը, անվանումը), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ **100000 դրամ.**

15. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **10000 դրամ.**

16. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **250000 դրամ.**

17. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **750000 դրամ,**

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1500000 դրամ,**

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2100000 դրամ,**

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3000000 դրամ.**

18. համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50000 դրամ,**

19. համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **30000 դրամ,**

2) հետտապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **300000 դրամ:**

20. Սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով սահմանված տուրքերի դրույքաչափերը հաշվարկվել են «2,0» գործակցի կիրառմամբ, 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունով և 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տուրքի դրույքաչափը՝ «3.0» գործակցի կիրառմամբ, 6-րդ կետով սահմանված տուրքի դրույքաչափը՝ «0.75», 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ, 8-րդ, 11-րդ կետերով, 12-րդ կետի 1-ին ենթակետի «ե» և «զ» պարբերություններով, 19-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տուրքերի դրույքաչափերը՝ «1.5», 9-րդ կետով գյուղական բնակավայրերի համար սահմանված տուրքերի դրույքաչափերը՝ «0.3», իսկ Կապան քաղաքի Վաչագան, Բաղարբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերի համար սահմանված տուրքերի դրույքաչափերը՝ «0.5», 16-րդ կետով նախատեսված տուրքի դրույքաչափը՝ «0.5», իսկ 17-րդ կետով նախատեսված տուրքի դրույքաչափը՝ «0.3» գործակցի կիրառմամբ:

21. Կապան համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **7000 դրամ,**

2) Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու,

հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **5000 դրամ**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **3000 դրամ**

4) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ Համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. յուրաքանչյուր մասնակցից **5000 դրամ**
յուրաքանչյուր դիտորդից՝ **500 դրամ**

5) Համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **1000 դրամ**

6) Համայնքի վարչական տարածքում տեղակայված անշարժ գույքի հասցեավորման համար մատուցված ծառայության դիմաց՝

ա. Կապան քաղաքի համար /բացառությամբ Վաչագան, Բաղարուջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասեր/ **5000 դրամ**

բ. Կապան համայնքում ընդգրկված գյուղերի և Կապան քաղաքի Վաչագան, Բաղարուջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերի համար՝ **2000 դրամ,**

7) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները կատարելու դեպքում տեղական վճար՝ **30000 դրամ,**

8) համայնքի վարչական տարածքում, սակայն բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումների անցկացնելու համար՝

ա. մեծ տաղավարների համար **5000 դրամ,**

բ. փոքր տաղավարների համար **3000 դրամ:**

Աշխատակազմի քարտուղար՝



Նկյի Շահնազարյան



ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՄԱԿԵՐԵՎ ԵՎ ԶԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 250 դրամ,

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 75 դրամ,

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների /ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների/, հանգստի տների, քաղանքի ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ,

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 դրամ,

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով /այդ թվում՝ ավտոկայանատեղի/՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ,

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարի չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերով:

7) շինություններում /այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում/, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերով:

2.1 Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

2.2 Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ քնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ, կամ

2) Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 դրամ:

3) Ոչ քնակելի նպատակային նշանակության շենքի և /կամ/ շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

